

ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆ

Արագածուրնի թեմի առաջնորդական փոխանորդ

ՆՈՐԱՆՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԿԱՐԿՆ

Լիակատար ինքնիշխանության հաստատման առաջին փորձերին, երբ բազմաթիվ հարցականներ հառնեցին մեր երկրի ու ժողովրդի առջև, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր աստվածադիր կոչմանն ու հազարամյա ավանդույթներին հավատարիմ, իրադարձությունների հուլովության բուռն կիզակեցրեց իր: Կոմունիստական փորապնդության պասնամյակներին հաջորդելու էին նոր ժամանակներ, և Մայր Եկեղեցին իրեն պարտադրված պարփակ շրջանակներից պեք է գնար դեպի հոգևոր սնուցման ծարավի իր զավակները, դեպի իր ժողովուրդը՝ նրան ստար կանգնելու, նրա ոգին ամրապնդելու մշտա-նորոգ առաքելությամբ:

Անկախության և պետականության ամրապնդման և նոր մարտահրավերներին դիմա-կայելու վերջին փորձերին հետևեցին ոչ պակաս դրամադիկ, քաղաքական ու ընկերային իրապես աննախադեպ զարգացումներ: Հայ հասարակության ընդերքում տեղի ունեցող բազմաշերտ խմորումների այդ բուռն ժամանակներում էր, որ Աստուծո և հայության կամոք, Լուսավորչի գահին կոչվեց Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Երկրորդը:

Նոր հրամայականները, բնականաբար, պահանջում էին նոր մոտեցումներ: Եվ Հայոց ազգընտիր Հայրապետի նախաձեռնությամբ էր, որ դրանք կյանքի կոչվեցին: Եկեղեցին թանգարանային մասունքից պեք է վերստին ամբողջապես դառնար գործուն և Աստուծո օրհնաբեր խոսքով՝ իր զավակների հոգիները ամբողջ, մաքառումների մեջ ոգորող հայորդ-յաց սրտերում քրիստոնեական բարոյականությունն ու համապարփակ սերը վերահաստա-պող կառույց: Այս խնդիրների լուծումն, անշուշտ, օրերի հարց չէր, այն պահանջում է երկա-րամյա, եռանդուն և անդադրում ջանադրություն, որին բոլորանվեր նվիրվեց նորօծյալ Վե-հախառ Հայրապետը:

Շարունակելով իր իմաստուն նախորդների գործն ու ավանդույթը, Նորին Սուրբ Օծուր-յունը փարված է մեր հավաքի անխառն մաքրության պահպանության ջարագություն-նը՝ լինի դա ներեկեղեցական կյանքում, թե միջեկեղեցական հարաբերություններում: Առա-քելահաստար հայ հավաքի սերմանումն ու պաշտպանությունն ավանդապահության արտահայտություն չէ միայն: Եկեղեցին հզոր է գիտակից, համակողմանիորեն կրթված, բազմակողմանի գիտելիքներով օժտված ու նվիրյալ հոգևոր սպասավորներով, որոնց շնոր-հիվ միայն հնարավոր է հոգեզարթոնքը դարձնել առավել ամբողջական ու լիարժեք: Այս ճշմարտության խոր գիտակցությամբ, ապագա հոգևոր վերազարթոնքի՝ միայն մեծերին հատուկ կանխազգացողությամբ էր, որ դեռևս 80-ական թվականների սկզբից, լինելով Արա-րապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Նորին Ս. Օծությունը բա-զում դժվարությունների դիմակայելով ու արգելքներ հաղթահարելով, 1990 թ., երբ դեռևս չէր ընդունվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, հիմնեց Վազ-

գնեյան Ղոզկոր Դայրանոցը: Այսօր արդեն Սևանա կղզու լքված մենաստանը վերածվել է կրթական ու վանական հզոր համալիրի՝ կապտաջինջ ծովակի գմբուխքն ակից իր լույսը միախառնելով Լուսավորչի կանթեղի անմարելի լույսին: Ներագայում մեր մյուս հոգևոր կրթարանների՝ Գևորգյան Ղոզկոր Ճեմարանի և Գյումրու ընծայարանի հետ Սևանի Դըպրանոցը ներառվեց նույն համակարգի մեջ, համալրվեց գիտա-մանկավարժական կարող ուժերով՝ Հայոց Եկեղեցին համալրելով հոգևոր սպասավորների նոր սերնդով, որը զինված է խորը և հաստատուն գիտելիքներով, ի գործ՝ իր փարախը գերծ պահել հոգեկուլ հարձակումներից:

Մեծ թափ ու աննախադեպ ծավալ ստացավ եկեղեցաշինությունը, հնգամյա հովվապետության ընթացքում Գարեգին Բ Հայրապետի ձեռամբ օծվել է երեք տասնյակից ավելի եկեղեցական կառույց: Արդեն փեսանելի է այն ապագան, երբ Հայոց աշխարհի բոլոր բնակավայրերում բաղցրաձայն կողողանջեն եկեղեցիների զանգերը: Վեհափառ Հայրապետի անվան հետք է կապվում մեր դպրոցներում Հայ Եկեղեցու պատմության ուսուցման վերահաստատումը: Վերադառնալով իր ակունքներին՝ մեր Մայր Եկեղեցին կրկին դառնում է գիտության ու մշակույթի խնամարկու, իր անփոխարինելի նպաստն է բերում ժամանակակից հայ մարդու կերպարի ձևավորմանը, նրանց գիտակցության մեջ կրոնասիրության և հայրենասիրության ամրակայմանը:

Անհնար է չնկատել հինգ տարիների ընթացքում հայրենի թեմերի առաջընթացը, որոնք դառնում են դինամիկ զարգացող կառույցներ, մեր կյանքը հագեցնում հոգևորի մշտագո ներկայությամբ ու քրիստոնեական առաքինություններով: Ղոզկոր հովվությունները ծանրակշիռ դեր են խաղում համայնքների կյանքում, ապաքինումի ու մխիթարության իրենց ամենօրյա կոչման իրականացման հետ միաժամանակ օժանդակելով նաև համայնքներին հուզող այլևայլ խնդիրների լուծմանը: Եկեղեցական տներն ու տոնախմբություններն ամենուրեք ստանում են զանգվածային բնույթ, վերականգնվում են մոռացության մասերը՝ վաճառված ավանդույթները, արմատավորվում է բարեպաշտությունը՝ որպես ապրելու և սրբեղծագործելու կերպ: Նկատելի վերելք է արձանագրվում նաև Միյուրքի թեմերում, ուր հայապահպանության խնդիրներին զուգահեռ նոր կարևորություն է ստանում հայրենիքի հետ ամենաբազմազան կապերի հաստատումն ու ամրապնդումը, մի բան, որի լուծման գործում հաջողություններն արդեն ակնառու են:

Հայաստանյան իրականության մեջ աննախադեպ էր հայտնույթ գտնելու հոգևորականության, որը հնարավորություն տվեց հանրապետության փարբեր քաղաքներում ու մարզերում մատաղ սերնդին կապելու ոչ միայն Եկեղեցու, այլև այդ նույն ճանապարհով՝ արվեստի ու մշակույթի հետ: Այժմ հայտնույթ գտնելու հանրապետության ողջ տարածքում կազմում են մի կուռ մանկակրթական համակարգ, որտեղ հաճախում են շուրջ 5000 երեխաներ, սովորում ու դաստիարակվում արվեստի, արհեստագործության, մարզական և գիտափորձիկական փարբեր դասարաններում:

Արմատական տեղաշարժ կատարվեց և Եկեղեցուն կից կառույցների գործունեության մեջ: Իրենց ողջ կազմակերպական ունակություններն ու կարողականությունը բացահայտեցին եկեղեցասեր փիկնանց ու երիտասարդաց միությունները: Եկեղեցու ծիրում իրենց գործունեությունն են ծավալում բարեսիրական փարբեր կազմակերպություններ, որոնք շո-

շափելի նպաստ են բերում սոցիալական հարցերի լուծմանը, մարդկանց սրելովագործ կարողությունների բացահայտման համար գործունեության փարբեր ասպարեզներ նախանշում: Եկեղեցու առանձնակի հոգածությունն են վայելում մեր հասարակության այն անդամները, որոնք կարող են օգնության ու խնամքի՝ ծերերը, որք երեխաները, հաշմանդամները: Այսպիսով՝ վերահասարակում է մեր Սուրբ Եկեղեցու բազմադարյա ավանդությո՝ լինել հոգևոր ամբողջ ու սփոփիչը մարդկային ամեն րեսակ հոգսերի, րառասպանքների ու ցավերի:

Նորին Սուրբ Օծության դերը մեծ է միջեկեղեցական կապերի և Էկումենիկ շարժման աշխուժացման գործում ևս: Բազմաթիվ այցելությունները, աշխարհի փարբեր երկրների կրոնական ու քաղաքական գործիչների հետ արգասավոր հանդիպումներն անուրանալի ձեռքբերում են փոխհամագործակցության ու փոխհարստացման ճանապարհին, ինչն, անշուշտ, բխում է մեր բազմադարյա Եկեղեցու, մեր անկախ պերականության շահերից:

Նախախնամության կամոք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի գահակալության րարիներին հայ ժողովուրդը հայրենիքում և ի սփյուռս աշխարհի 21-րդ դարմուրք գործեց՝ րոնախմբելով իր պարմության ամենակարևոր ու մեծագույն իրադարձությունների հոբելանական հիշարակությունները՝ Քրիստոնեությունը պերական կրոն հռչակելու 1700, Հայոց գրերի գյուրի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1600-ամյա րարեդարձները: Շնորհիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մեր անկախ պերականության պարասխանարուների անմնացորդ ջանադրության և իմաստուն րնօրինումների՝ հնարավորություններ են սրելովում աշխարհին մեկ անգամ ևս ներկայացնելու քրիստոնեական մեր քաղաքակրթության նվաճումները, արժանի րել գրավելու մարդկության առաջընթացին իրենց անուրանալի ավանդը բերած ժողովուրդների շարքում:

Նոր հազարամյակը նոր մարարահրավերներ է բերում: Իրենց նախադեպերը չունեցող բազմաթիվ նոր իրողություններ այսօր խնդիրներ են առաջադրում ողջ մարդկությանը, քրիստոնյա աշխարհին, հերևաբար նաև մեր ժողովրդին: Դրանց դիմագրավելու և լուծելու կամք, հասարակամություն, լայնախոհություն, աստվածարուր բազում շնորհներ՝ ահա բնութագծեր, որ, ի բարեբախտություն մեր Եկեղեցու, ներհարուկ են նրա այսօրվա Հովվապերին: Կասկած չկա, որ Նորին Սուրբ Օծության իմաստուն առաջնորդությամբ հայ հավարացյալ հուրը պարրաստ է ընդառաջ գնալ այդ մարարահրավերներին, իր ավանդը բերել խաղաղ ու աշխարհաշեն կյանքի արարմանը՝ պահել-պահպանելով, անշուշտ, իր անաղարուր դիմագիծն ու հազարամյակների փորձություններով անցած մեր հայրերի ճշմարիտ հավարքը: